

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

----- 2020 թվականի N - Ա

ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածների դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի հաշվեկշռում հաշվառված Երևան քաղաքի Երեբունի 12/6 հասցեում գտնվող 600.3 քմ մակերեսով անշարժ գույքը [N 06032018-01-0219, գաղտնաբառը՝ AAYCPGVYY3PX] անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով հետ վերցնել և հանձնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինությանը՝ այն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացնելով Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:
2. Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարին՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված շենք, շինությունների ճշգրտված տվյալներով Հայաստանի Հանրապետության անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման աշխատանքների իրականացումը՝ դրանց հետ կապված ծախսերն իրականացնելով Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:
3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի

կառավարման կոմիտեի նախագահին՝ Հայաստանի
Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի և Հայաստանի
Հանրապետության կառավարությանը ենթակա սննդամթերքի
անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի հետ համատեղ սույն
որոշման 2-րդ կետում նշված աշխատանքների ավարտից հետո
երկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով ապահովել սույն
որոշմամբ նշված գույքի հանձնման-ընդունման աշխատանքների
կատարումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը
հաջորդող օրվանից: